



## Նախագահի գրասենյակ

2020 թվականի ապրիլի 13

Բարի երկուշաբթի LACC ընտանիք,

Հուսով եմ, որ խաղաղ հանգստյան օրեր եք ունեցել, և հուսով եմ, որ բոլորդ այսօր հանգստանում եք մեր ոչ ուսումնական օրվա ընթացքում: Վաղը սկսվում են մեր կարճաժամկետ դասերը: Դասերի մեծ մասը արդեն լիքն են, բայց խնդրում ենք դիմել ձեր դասախոսին, եթե ցանկանում եք դասն ավելացնել: Նրանց կարող եք դիմել էլփոստով: Եթե դասի ավելացման հարցում օգնության կարիք ունենաք, դիմեք մեր welcome center-ի աշխատակիցներին՝ [hotline-students@lacitycollege.edu](mailto:hotline-students@lacitycollege.edu)-ով:

Հիշեք, որ մեր քոլեջի կայքի՝ [www.lacitycollege.edu](http://www.lacitycollege.edu), առաջին էջում մենք ունենք շատ օգնություններ և ռեսուրսներ, ինչպես նաև հաղորդակցություն և տեղեկատվություն պրոֆեսորադասախոսական կազմի, անձնակազմի և ուսանողների համար:

Այս պահին քոլեջը փակ է մուտք գործելու համար: Եթե Ձեզ անհրաժեշտ է մուտք գործել համալսարան ինչ-ինչ պատճառներով, դուք պետք է գրանցվեք շերիֆի գրասենյակում: Քոլեջ մուտք գործողներից յուրաքանչյուրը ՊԵՏՔ է դիմակ կրի: Նրանք, ովքեր դիմակ կրելուց չլինեն, չեն կարողանա մտնել շենք:

### **Ակադեմիական գործերի բաժնի անունից**

PASS/NO PASS գնահատման տարբերակ

Ուսանողները կկարողանան խնդրագիր ներկայացնել այս կիսամյակի ցանկացած դասի համար՝ ձևակերպելու PASS / NO PASS գնահատականի տարբերակներից մեկը, և դիմումի հիման վրա գործընթացը կհաստատվի: Դիմում խնդրագրերը հասանելի են առցանց <http://laccd.edu/Students/Pages/Student-Forms.aspx> կայքում: Դուք կարող եք խնդրագրերը ներկայացնել «PASS/NO PASS»-ի համար մինչև 2020 թվականի մայիսի 10-ը:

Adobe Creative Cloud-ը ժամանակավոր մուտք է ապահովել տանն օգտվելու համար: Այն հասանելի կլինի մինչև 2020 թվականի մայիսի 31-ը: Խնդրում ենք հետևել ստորև նշված հրահանգներին՝ ձեր անձնական սարքի մեջ Creative Cloud Desktop Apps-ն ունենալու համար:

1. Այցելեք <https://creativecloud.adobe.com> կայքը և օգտագործեք ձեր դպրոցական տվյալները մուտք գործելու համար: Անհրաժեշտ է օգտագործել ձեր @student.laccd.edu էլփոստի հաշիվը:

2. Դուք կուղղորդվեք Microsoft-ի կայքը, որտեղ պետք է կրկին մուտքագրեք ձեր դպրոցական տվյալները:

Կրկին մուտքագրեք @student.laccd.edu-ն և սեղմեք Next: Դուք կուղղորդվեք դեպի LACCD մուտքի էջ: Մուտքագրեք ձեր LACCD գաղտնաբառը՝ շարունակելու համար:

3. Creative Cloud կայքէջից փնտրեք և ներբեռնեք ձեր ցանկալի ծրագիրը: Բոլոր ծրագրերը նայելու համար սեղմեք կայքի վերևում գտնվող Apps-ը:

Ամառվա դասացուցակը կիրառարակվի այսօրվանից սկսված մեկ շաբաթ անց՝ երկուշաբթի օրը, ապրիլի 20-ին, առցանց: Մենք կունենանք երեք նստաշրջան՝ երկու 5-շաբաթանոց և մեկ 8-շաբաթանոց: Ամառային գրանցումը կսկսվի մայիսի 5-ին: Որոշ դասընթացներ նշանակված են որպես համաժամանակյա հանդիպումներ, այսինքն՝ դասացուցակում նշվելու են դասի «հանդիպումների» ժամանակներն ու օրերը: Ձեզանից ակնկալվում է, որ դուք առցանց լինեք այդ ժամանակահատվածում և մասնակցեք դասերին:

«Աշուն 2020» դասերի դասացուցակը փակցնելու համար մենք չունենք կոնկրետ ժամանակացույց: Մենք կսպասենք և ս մի քանի շաբաթ՝ հետևելու մեր տարածքում համաճարակի առաջընթացին, նախքան մենք կհայտարարենք «Աշուն 2020» դասերի ավարտի օրերը:

### **Ուսանողական ծառայություններ բաժնի կողմից**

Ուսանողները կստանան իրենց ֆինանսական երկրորդ օգնությունը 2020 թվականի ապրիլի 22-ին:

Ուսանողները մինչև մայիսի 10-ը ժամանակ ունեն դասերը դադարեցնելու և EW (emergency withdrawal) ստանալու համար, որը չի ազդի նրանց բավարար առաջընթացի կամ դասեր վերցնելու փորձեր կատարելու քանակի վրա:

Այս շաբաթվանից սկսած փոխվել են մեր Թաուն Հոլ հանդիպումների օրերն ու ժամանակները: Մենք կհանդիպենք երեքշաբթի և հինգշաբթի 12:30-ին:

**ՀԱՎԱՏԱՆ ՎԱՃԻՐ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԻՐ** Եվ մենք սկսում ենք ևս մեկ շաբաթ մեր հիանալի քոլեջում:

Լավ և ապահով եղեք՝

Մերի

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Посетите LACC [website](#), чтобы просмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)